

ձեռագրատան մէջ, յանուն Գերշ. Հ. Պօղոս Վրդ. Անանեան Աբբա-
 չօր, որ կը բացակայէր Վենետիկէն, ողջոյնի եւ բարեգալուստի խօս-
 քը կ'ողղէր, իտալերէն լեզուով, «Բաղմարէպ»ի խմբագրապետ Հ.
 Ներսէս Վրդ. Տէր-Ներսէսեան: Հուսկ՝ հիւրերը կ'առաջնորդուէին
 վանքի սեղանատունը, որու անդորրաւէտ մթնոլորտին մէջ կատար-
 ուած հիւրասիրութեամբ, մտերմիկ խօսակցութեան հաճելի պահ մը
 կ'անցընէին:

Շողենաւին սոյլը, մինչ հիւրերը կը բաժնէր Ս. Ղազարի կանաչ
 ափերէն, կը նշէր նաեւ փակուած Հայ Մշակոյթի եւ Հայկական ու-
 սումաներուն ի պատիւ արձանադրուած դեղեցիկ էջի մը: Էջ մը՝ որ
 կը յայտնուի բեղուն, նորանոր իրադրոժումներու հեռանկարներով:

ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ

ՈՂՋՈՅՆԻ ՈՒՂԵՐԶ

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ

ԻՐԵՆՑ Ս. ՂԱԶԱՐ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

(2 Յունիս 1978)

Մեծայարգ Տեաք

Ամենահանելի պարտականութիւն կը նկատեմ, ի բացակայու-
 թեան Գեր. Ընդհ. Աբրահօր, որ նախագահն է մեր Ս. Ղազարի Հայ-
 կական Կանառին, ներկայացնել բարի գալուստի մեր սրտագին ու
 ջերմ խօսքը ձեր բոլորին, որ ձեր ցանկալի ներկայութեամբ յայտ-
 նեցիք գնահատանքի ու յարգանքի վկայութիւն մը՝ ո՛չ միայն ինքնին
 հայ մշակոյթին, այլ նաեւ մշակութային այն գաղափարական ար-
 ժէփներուն, որոնք միւս կազմեցին այս, պիտի ըսէի՝ գրեթէ եղբայ-
 րական հանդիպումին, որ նոխացած է Արեւելի եւ Արեւմուտքի այն-
 քան լուսաւոր տուեալներով:

Պատմութեան դատաւնիքով եւ գիտակցաբար ստանձնուած կռ-
 ջունով մը՝ Հայաստան եղած է հանդիպումի հանգրուանը բարձր ու
 ցայտուն փառափառութիւններու:

Այլազան աւանդութիւններու համագումարի այս առաքելութիւնը՝
 Հայ Մշակոյթը շարունակեց կատարել նաեւ յարաբերաբար մերձա-
 ւոր շրջաններու մէջ, երբ Հայաստան կը ներկայացնէր փառափառ

գոյութենէ մը աւելի՝ մշակոյթի մը միութիւնը եւ ոգին, մինչ հայ
 ժողովուրդին մեծ մասը կ'ապրէր ցրուած՝ լայնատարած սփիւռքի ա-
 մենագրի երկիրներուն մէջ, Զինաստանէն մինչեւ Եւրոպա. ամբիւ.
 երկիրներ՝ ուր Հայը տարաւ կայծ մը իր ոգիէն եւ ստացաւ շող մը
 տեղական մշակոյթէն. մանաւանդ թէ հայ Սփիւռքի զանազան կա-
 յաններու փոխադարձ մշտակայ կապերը պատմաւ հանդիսացան հան-
 գոյցներու՝ նաեւ գիրքնէ հիւրընկալող զանազան երկիրներուն միջեւ:

Յատկանշական գիծ մը, որ բնորոշեց հայ Սփիւռքի դարաւոր
 պատմութիւնը՝ եղաւ անտարակոյս կենդանի համաձուլումը կրկնա-
 կի հաւատարմութեան, հանդէպ իր ծագումին եւ իր մօր հայրենի-
 քին, որուն շահերն ու տեսականները Հայը ամբողջ իրը կ'ընէր:

Հայ մշակոյթին այս համագումարի առաքելութեան կենսունակ
 նշանակն է անկասկած այս կողմն, եզակի ծուէն մը մեծ Հայաս-
 տանի, Ադրիականի կապայտին մէջ ծփացող այս փոքրիկ Հայաստա-
 նը, ինչպէս հիմա կը սիրէ կոչել գայն հայ ժողովուրդը, սեպմունտ
 «Սերենիսսիմայ»ի կուրծքին, որ կը կազմէ հիւսնալի կայան մը՝ եղ-
 բայրական բարեբեր գրկախառնումի, Արեւելի եւ Արեւմուտքի
 միջեւ:

Հո՛ւս է որ եկաւ Սերաստացին Միսիթար, հեռաւոր 1717ին, եւ
 այդ վայրկեանէն ամենօրեայ շինարար գործունէութիւն մը, ոչ մի-
 այն միւսական, այլ յատկապէս բարոյական ու մտաւորական, փո-
 խակերպեց բոլորներու նախկին կողմն՝ մշակութային զարթոնքի կե-
 դրանի մը, զոր Նափուէն բարձրացուց Ակադեմիայի, ուսկից փա-
 ռագայթեց վերածնունդի լոյսը, ժրագն հոգեւորականներու աշխա-
 տութեամբ, որոնք լուսակերպեցին հայ մշակոյթը՝ ամբողջ ԺԸ. եւ
 ԺԹ. դարերու ընթացքին:

Այս կողմն, մինչ այսօր ժպտերես կ'ողջունէ ձեզ իր վարդերով
 ու գարնանային բոյրերով, ուրախ է նաեւ կարենալ ցուցադրելու
 Ձեզի իր վերանորոգեալ դիմագիծը՝ երեք տարի առաջ կրած ծանր
 հարուածէն ետք:

Շնորհիւ իտալական Պետութեան վեհանձն օժանդակութեան,
 Վենետիկեան Հեղինակութիւններու փութացան իրագրութեան եւ
 աշխատակցութեան, եւ Հայ ժողովուրդի ձեռնտուութեան, կարելի
 դարձաւ՝ ինչպէս վերահասու եղաւ՝ իրագործել հիմնական վերանո-
 րութեան համբերատար աշխատութիւն մը:

Յատուկ երախտագիտութեամբ կը յիշենք այս առիթով բարո-
 յական սրտակցութեան երեւոյթները, որոնց համար միշտ երախտա-
 պարտ ենք:

Հոս թոյլ տրուի մեզի մասնայատուկ յիշատակութիւն մը՝ եօ-
 քանասունի չափ հնատիպ մատեններու նուէրին՝ կատարուած երե-
 ւանի Մեսրոպ-Մաշտոցի անուան Պետական Մատենադարանին կող-

մէ, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ հաստատումներու՝ Վիեննայի մեր եղբայրակիցներէն եւ այլ կեդրոններէ:

Անկեղծ մազթանքներ, ի վերջոյ, ձեր աշխատութիւններուն եւ ուսումնական ծրագիրներուն, մինչ բոլոր սրտով շնորհակալ կ'ըլլանք Հայագիտական այս Հաւաքոյթին կազմակերպիչներուն՝ իրենց ազնիւ գաղափարին համար՝ կնքելու ուսումնական եռօրեան եզրափակիչ այցելութեամբ մը հոս Ս. Ղազարի մէջ, ուր Պայրըն խոկաց եւ ըստեղծագործեց:

Հուսկ կը փափաքեմք մեր ամէնէն սրտագին ողջոյնները ներկայացնել Վենետիկի Ուսումնական Համալսարանի Վարչութեան, յարգարժան վերատեսուչին, Ակադեմական Մարմնին ու համայն մասնակցողներուն, ինչպէս նաեւ մեր սիրելի Դոկտ. Ալպերթոյ Ռիցցիին՝ Քննիչ Վենետիկի Մշակութային եւ Պատմական գոյներուն վերատեսուչութեան՝ իր հմուտ եւ ազնիւ բացատրութիւններուն համար, որոնցմով կենսաւորեց այս հանդիպումը:

Հ. Ն. Տ. Ն.

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՆՈՒԻՐՈՒՍԾ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ Բ. ՍԻՄՓՈԶԻՈՒՄ

(Երևան, 12-18 Սեպտ. 1978)

Այլեւայլ առիթներով, վերջին տասնամեակներու ընթացքին, բարձր մակարդակի գիտական հանդիպումներու, համաժողովներու, Միմիոդիումներու քաղաքը կոչուած է Երևան:

Հայ Արուեստին Նուիրուած Միջազգային Բ. Գիտաժողովին բացառապէս յաջող իրադրութեամբ, Երևան ոչ միայն արդարացուց իրեն տրուած կոչումը, այլ նաեւ նոր տարածքով մը ճոխացուց զայն՝ հողին նուիրականութեան բոլոր եւ սերտելի իրականութիւններու առկայութեան յուզումը հաղորդելով գիտութեան խօսքին:

Միջազգային ու գիտական մակարդակով ամէն հանդիպումի տրուած չէ, մանաւանդ երբ անոնք հեռւոր անցեալի մըն ալ կը նային, միացնել գիտութեան հմայքը՝ բնավայրին հարազատութեան: Ոչ ալ, անշուշտ, կարեւորութեան պարագային՝ նման սկզբունքի մը կանոնական դարձած կիրարկումը անպայման նախընտրելի պէտք էր համարուի: Բայց նկատեցէք պահ մը՝ թէ ի՞նչ պիտի ըլլար բիւզանդագիտութեան միջազգային համաժողովի մը փայլը՝ նոյնինքն պատմական Բիւզանդիոնի քուրճերուն վրայ, Սրբուհի Սոփիայի մը դմբէթներուն շուքին ներքեւ:

Հայ Արուեստի Միմիոդիումը Երևանի մէջ՝ իր իմաստնային տարողութեան գաղաթնակէտին հասաւ անով որ, գիտական-կադմակերպչական բոլոր նուաճումներէն անդին, գիտաժողովին մասնակցողները կրցան դալ իրենց բնիկ ու հարազատ միջավայրին մէջ այդ արուեստին ստեղծագործութիւնները՝ Գառնիէն Հոփիսիմէ, Գեղարդէն Սանահին, Զուարթնոցէն մինչեւ Ծիծեռնակաբերդ, դաբերու թողած մոխիրով ու արցունքով, յոյգերով եւ յոյսերով:

Գաղափար մը կազմելու համար Գիտաժողովին տարածքներուն եւ զտած ընդունելութեան՝ բաւ է ըսել թէ, պաշտօնական յայտարարէն համաձայն, 142 հոգիի կը հասնէր հրաւիրեալներու թիւը արտասահմանի երկիրներէն, որոնցմէ հինգը Սովետական հանրապետութիւն-